ՄԱՓԳՀ

Միավորված ազգերի կազմակերպության
փախստականների հարցերով գերագույն հանձնակատար **Ակնարկ 2**

Անվտանգության խնդիրների լուծումն առանց փախստականների պաշտպանության արդյունավետության թուլացման[1]
-ՄԱՓԳՀ մոտեցումը-

Ա. Ներածություն

1. Մեկ տասնամյակից ավել է, ինչ անվտանգության նկատառումները ներթափանցել են հիմնախնդիրների լայն շրջանակի լուծմանն ուղղված քաղաքականության ոլորտ: 2001 թվականի սեպտեմբերի 11-ից ի վեր միջազգային ահաբեկչությունից եկող՝ անվտանգությանն ուղղված սպառնալիքները նոր թափ են առել աշխարհի բազմաթիվ տարածաշրջաններում հաջորդիվ տեղի ունեցած, մեծ հասարակական հնչողություն ստացած հարձակումների և զարգացումների արդյունքում: Ժամանակ առ ժամանակ ակնարկներ են արվել միջազգային ահաբեկչության և մարդկանց տեղաշարժերի միջև հնարավոր կապի առկայության մասին: Մտավախություններն այն մասին, որ ապաստան հայցողները և փախստականները կարող են սպառնալիք ներկայացնել ընդունող երկրի համար, բորբոքվել են օտարատյացության քարոզչությունից, որն ուղղված է աջակցելու ապաստանի տրամադրման ոլորտում սահմանափակող քաղաքականության որդեգրմանը:

2. Համաձայն ՄԱՓԳՀ տեսակետի՝ անվտանգությունն ու պաշտպանությունը փոխադարձաբար իրար բացառող հասկացություններ չեն: Պաշտպանության հաշվին անվտանգությանն առաջնահերթություն տալը ոչ մի դրական արդյունքի չի հանգեցրել: Այնուամենայնիվ, հնարավոր է այնպես անել, որ նրանք, ովքեր հետապնդումների, հակամարտությունների կամ անվտանգության բացակայության պատճառով հարկադրված են լքել իրենց տները, օգտվեն միջազգային պաշտպանությունից՝ միևնույն ժամանակ պահպանելով ապաստանի տրամադրման գործընթացի անաչառությունը:

3. ՄԱՓԳՀ-ն կիսում է Պետությունների արդարացի մտահոգությունն այն մասին, որ անհրաժեշտ է այնպես անել, որ ահաբեկչական գործողություններ իրականացնողները կամ վերջիններիս աջակցողները որևէ հնարավորություն չունենան մուտք գործելու երկրի տարածք, լինի դա ապահով պատսպարան գտնելու, հետապնդումից

[1] Սույն փաստաթուղթը փոխարինում է «Անվտանգության խնդիրների լուծումն առանց փախստականների պաշտպանության արդյունավետության թուլացման. ՄԱՓԳՀ մոտեցումը, Ակնարկ 1» խորագրով ավելի վաղ տարբերակին, որը հրապարակվել է 2001 թվականի նոյեմբերին:

խուսափելու, թե հետագա հարձակումներ իրականացնելու նպատակով: Անվտանգությանը սպառնացող հնարավոր վտանգներին արդյունավետ հակահարված տալը, այնուամենայնիվ, չի կարող բխել այնպիսի միջոցառումների իրականացումից, որոնք ուղղված են փախստականների և գաղթականների տեղաշարժը սահմանափակելուն և նրանց մուտքն էլ ավելի խստացնելուն: Սա պարզապես ստիպում է փախստականներին և գաղթականներին փնտրել այլ ուղիներ, դժվարացնում է նրանց վիճակը և նպաստում մաքսանենգությամբ և մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների բիզնեսի բարգավաճմանը:

4. Փոխարենը, ՄԱՓԳՀ-ն կոչ է ցուցաբերել համապարփակ մոտեցում, որի կիզակետում պետք է լինի ապաստանի տրամադրման գործընթացների և միգրացիոն հոսքերի կարգավորումը, ինչը թույլ կտա Պետություններին հաստատել իրենց տարածք մուտք գործողների ինքնությունը և արձագանքել պաշտպանության, ինչպես նաև անվտանգության խնդիրներին՝ միջազգային իրավունքով սահմանված իրենց պարտավորություններին համապատասխան: Համապատասխան մեխանիզմներ պետք է գործեն ինչպես ապաստանի տրամադրման, այնպես էլ այլ ոլորտներում:

5. Ստորև ներկայացված դիտողություններն արվել են այս հիմնական նկատառումների հիման վրա և նպատակ են հետապնդում երաշխավորելու հակահաբեկչական միջոցառումների համապատասխանությունը միջազգային իրավունքի տարբեր հայեցակերպերին, մասնավորապես՝ մարդու իրավունքներին և փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերին, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքին:

Բ. Ընդհանուր դիտողություններ

6. ՄԱՓԳՀ-ի գլխավոր մտահոգությունը կրկնակի է, մասնավորապես՝ այն մասին, որ ապաստան հայցողները և փախստականները կարող են դառնալ հասարակական նախապաշարմունքների և անհարկի սահմանափակումներ դնող օրենսդրական կամ վարչական միջոցների զոհը, և որ փախստականների պաշտպանության՝ հանգամանորեն մշակված չափանիշները կարող են կորցնել իրենց նշանակությունը: Միջազգային ահաբեկչության հետ կապված ներկայիս անհանգստության պատճառով վտանգ կա, որ նրանք, ովքեր անվտանգություն են փնտրում, կարող են ընկալվել որպես անվտանգության սպառնալիք: Սա կարող է հանգեցնել վախի և օտարատյացության մակարդակի աճի, որոնք դրսևորվում են ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ թշնամական վերաբերմունքի և նույնիսկ նրանց վրա ֆիզիկական հարձակումների միջոցով: Նման վախերը և մտահոգությունները կարող են նպաստել որպես վտանգ ընկալվողներին հեռու պահելու նպատակով արգելքներ ստեղծելու միտման աճին: Այսպիսի համատեքստում ապաստան հայցողները մի շարք

պետություններում հանդիպում են դժվարությունների՝ կապված ընթացակարգերի հասանելիության և իրենց ներկայացրած հայցերի օրինականության վերաբերյալ կանխակալ կարծիքները հաղթահարելու հետ, որոնք պայմանավորված են նրանց էթնիկ պատկանելությամբ և ժամանման ձևով: Այն փաստը, որ ապաստան հայցողները ժամանել են անկանոն կերպով, կասկածի տակ չի դնում նրանց հայցի հիմնավորվածությունը:

7. Անվտանգության երաշխիքների մասին ցանկացած քննարկում պետք է սկսվի այն փաստի ճանաչումից, որ փախստականներն իրենք են փախչում հետապնդումներից և բռնություններից, այդ թվում՝ ահաբեկչական գործողություններից: Մյուս ելակետն այն է, որ փախստականների վերաբերյալ միջազգային գործիքներն ահաբեկիչներին չեն տրամադրում ապահով ապաստարան և վերջիններիս չեն պաշտպանում քրեական հետապնդումից: Հակառակը, դրանք հնարավոր և պարտադիր են դարձնում ահաբեկչական գործունեությամբ զբաղվող անձանց ճանաչումը, բացառում են նրանց փախստականի կարգավիճակի շնորհումը, չեն պաշտպանում նրանց քրեական հետապնդումից և չեն արգելում նրանց հանձնումը կամ արտաքսումը:

8. ՄԱՓԳՀ-ի ընդհանուր եզրակացությունն այն է, որ ապաստանի տրամադրման համատեքստում ահաբեկչական սպառնալիքների խնդրի լուծումը չի պարտադրում բարեփոխել այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է փախստականների պաշտպանությունը, այլ պահանջում է համապարփակ և համակարգված մոտեցում ցուցաբերել փախստականների, գաղթականների և այլոց խառը տեղաշարժերի հետ կապված իրավիճակների կարգավորման հարցում, ինչպես նաև ապահովել անվտանգության և պաշտպանության համապատասխան երաշխիքներ:

Գ. Փախստականի կարգավիճակի որոշման գործընթացի հասանելիությունը

9. ՄԱՓԳՀ-ն գնահատում է Պետությունների՝ սահմանների վերահսկողությունն ուժեղացնելու ցանկությունը որպես երկիր մուտք գործելուն պես անվտանգությանը սպառնացող վտանգի չեզոքացման միջոց: Ճանապարհորդական երթուղիների գծով ուժեղացված համագործակցությունը խնդրո առարկա Պետության և այլ Պետությունների սահմանապահների, հետախուզության ծառայությունների, ներգաղթի և ապաստանի տրամադրման հարցերով զբաղվող պետական մարմինների և այնպիսի կազմակերպությունների միջև, ինչպիսիք են Ինտերպոլը, Եվրոպոլը և Ֆրոնտեքսը, ինչպես նաև այնպիսի համակարգերի կիրառությունը, ինչպիսին է «ԵՎՐՈԴԱԿ»-ը, կարող են օգնել ահաբեկչության մեջ կասկածվողների վաղ ճանաչման հարցում: Անվտանգության ուժեղացված ստուգումները, այդ թվում՝ կենսաչափական տվյալների օգտագործման միջոցով, ինչպես օրինակ՝ մատնահետքերի, աչքի

ծիածանաթաղանթի սկանավորումները և/կամ դեմքի ճանաչումը, խելամիտ միջոցառումներ են, եթե իրականացվում են՝ տվյալների պահպանման սկզբունքների և մարդու իրավունքների այլ համապատասխան չափանիշների համաձայն: Տեղեկությունների հավաքագրման համապատասխան միջոցառումներն օրինական են, եթե դրանք իրականացվում են անհրաժեշտության, համաչափության և խտրականության բացառման սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև ենթակա են դատական վերահսկողության: Զուտ անձի ենթադրյալ ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկ պատկանելության վրա հիմնված կերպավորումը (պրոֆիլավորումը), ՄԱՓԳՀ-ի կարծիքով, խտրականություն է ենթադրում և տեղին չէ:

10. ՄԱՓԳՀ-ն շարունակում է համագործակցել Պետությունների հետ սահմանների կառավարման՝ պաշտպանության խնդիրները հաշվի առնող համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ: Տարիներ առաջ ՄԱՓԳՀ-ն մշակեց «Փախստականների պաշտպանությունը և խառը միգրացիան. 10 կետից բաղկացած գործողությունների ծրագիր»-ը, որը կառավարման ռազմավարությունների և մուտքի համակարգերի վերաբերյալ գործնական առաջարկություններ է տրամադրում: Դրա հիմքում ընկած են միջոցառումներ, որոնք երաշխավորում են անկանոն կերպով ճանապարհորդող փախստականների և ապաստան հայցողների (ինչպես նաև հատուկ կարիքներ ունեցող այլ անձանց) ճանաչումը, վերջիններիս պաշտպանվածությունը *հարկադիր վերադարձից* և ապաստանի տրամադրման ընթացակարգերին մասնակցելու հնարավորությունը: Ժամանող անձանց ընդունելու, աջակցելու, գրանցելու և ստուգելու ամուր կարողությունը նպաստում է հակաահաբեկչական պայքարի և անվտանգության միջոցառումների արդյունավետությանը՝ թույլ տալով Պետություններին ժամանողների տարբեր խմբերի միջև հստակ տարբերակում մտցնել, ինչպես նաև հնարավոր դարձնելով այն անձանց վաղ ճանաչումը, ովքեր կարող են վտանգ ներկայացնել անվտանգության համար[2]:

11. Ապաստան հայցողներին ընդունելու խմբակային մերժումը սահմանի անցման կամ մուտքի կետերում կարող է հավասարազոր լինել *հարկադիր վերադարձի*: Բոլոր անձինք ունեն ապաստան հայցելու իրավունք: Ապաստանի դիմումի ընթացքը պետք է վճռվի դիմումի, այլ ոչ թե բացասական և խտրականության վրա հիմնված ենթադրությունների հիման վրա, որոնք պայմանավորված են դիմողի էթնիկական ծագմամբ կամ կրոնական պատկանելությամբ:

---

[2] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNHCR, *Refugee Protection and Mixed Migration: The 10-Point Plan in Action*, February 2011/ ՄԱՓԳՀ, «Փախստականների պաշտպանությունը և խառը միգրացիան. 10 կետից բաղկացած գործողությունների ծրագիր» փաստաթուղթը, 2011 թ. Փետրվար/, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/4d9430ea2.html :

12. Փախստականի սահմանումը ճիշտ կիրառության դեպքում պետք է հանգեցնի նրան, որ կա՛մ չներառվեն, կա՛մ բացառվեն այն անձինք, ովքեր պատասխանատվություն են կրում լուրջ քրեական հանցագործությունների, այդ թվում՝ ահաբեկչական գործողությունների համար: Քանի որ բացառման հարցը հաճախ բարդություններ է պարունակում, ՄԱՓԳՀ-ն շարունակում է սատարել այն տեսակետը, որ դրանք պետք է շարունակեն քննվել ապաստանի տրամադրման կանոնավոր ընթացակարգերի շրջանակներում, ինչը թույլ է տալիս յուրաքանչյուր անհատական դեպքի համար լիարժեք փաստական և իրավական գնահատում իրականացնել հմուտ և փորձառու անձնակազմի կողմից:

13. Եթե իրական հավանականություն կա, որ ապաստանի հայց ներկայացրած անհատի դեպքում կարող է բացառման հարց առաջ գալ, Պետություններն ակնհայտորեն շահագրգռված են, որ որոշումը կայացվի արագացված գործընթացի միջոցով: Նման դեպքերում ՄԱՓԳՀ-ն կողմնակից է պատշաճ իրավական և փաստական գնահատմանը, սակայն հավատացած է, որ այն կարելի է իրականացնել փախստականի կարգավիճակի որոշման գործընթացի շրջանակներում մասնագիտացված «բացառման հարցերով զբաղվող մարմնի» կողմից ապաստանի հայցի առաջնահերթ և արագացված քննության միջոցով: Նման մարմինը պետք է փորձառու լինի փախստականներին առնչվող իրավական նորմերի և քրեական իրավունքի ոլորտում, տիրապետի ահաբեկչական կազմակերպությունների վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հստակ հաղորդակցական կապեր ունենա հետախուզության ծառայությունների և քրեական հանցագործություններով զբաղվող իրավապահ մարմինների հետ: Մասնագիտական փորձառությունը և հստակ կենտրոնացված ռեսուրսները հնարավորություն են տալիս արագ և որակով որոշումներ կայացնել: ՄԱՓԳՀ-ն աջակցում է ապաստանի տրամադրման գործընթացի վերաձևմանը այսպիսի մի մարմին ձևավորելու և գործի դնելու նպատակով:

14. Եթե ապաստան հայցողը հետախուզվում է ապաստանի երկրի ազգային դատարանների կողմից, ապա ապաստանի հայցի քննությունը կարող է հետաձգվել մինչև քրեական վարույթի ավարտը: Այն դեպքում, երբ ծագման երկիրը հանձնման խնդրանք է ներկայացրել, ապաստանի տրամադրման և հանձնման վարույթները կարող են իրականացվել զուգահեռ, բայց փախստականի կարգավիճակի տրամադրման վերաբերյալ որոշումը պետք է նախորդի հանձնման վերաբերյալ որոշմանը: Ապաստան հայցողը, սակայն, կարող է հանձնվել իր ծագման երկրից տարբեր երկրի, եթե հետապնդման վտանգ առկա չէ, և փախստականի կարգավիճակի որոշման գործընթացի հասանելիությունը երաշխավորված է: Այս համատեքստում ՄԱՓԳՀ-ն վկայակոչում է Պետությունների՝ ահաբեկիչներին արդարադատությանը

հանձնելու պարտավորությունը՝ ամրագրված ՄԱԿ անվտանգության խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1373 բանաձևով և վերահաստատված բոլորովին վերջերս ՄԱԿ անվտանգության խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 2178 բանաձևով:

15. Մարդասիրական ճգնաժամերի, այդ թվում՝ մեծամասշտաբ ներհոսքերի և բնակչության միջսահմանային խառը տեղաշարժերի ժամանակ, երբ արձագանքման առկա միջոցները համապատասխան կամ բավարար չեն, ժամանակավոր պաշտպանության կամ կացության միջոցառումներ կարող են իրականացվել՝ որպես համապատասխան բազմակողմանի արձագանք՝ երաշխավորելու միջազգային պաշտպանության կարիք ունեցողների՝ *հարկադիր վերադարձից* պաշտպանվածությունը և նրանց հանդեպ պատշաճ վերաբերմունքը: Նման իրավիճակներում ընդունելության միջոցառումները պահանջում են շահառուների ինքնության հաստատման, գրանցման և փաստաթղթավորման պատշաճ համակարգեր, այդ թվում՝ ինքնության և անվտանգության ստուգում[3]:

Դ. Ապաստան հայցողների տեղաշարժի սահմանափակումներ

16. Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիան և դրա 1967 թվականի արձանագրությունը (այսուհետ՝ 1951 թ. Կոնվենցիա), ինչպես նաև մարդու իրավունքներին առնչվող իրավական նորմերը չեն կանխում ապաստան հայցողների տեղաշարժի սահմանափակումները, այդ թվում՝ կալանքը, որը, չնայած, կիրառվում է ոչ թե որպես կանոն, այլ որպես բացառություն, անհրաժեշտության դեպքում՝ օրենքով նախատեսված և պատշաճ գործընթաց ապահովող երաշխիքների ենթակա հանգամանքներում: Կալանքը համարվում է հիմնավորված և անհրաժեշտ այն դեպքում, երբ ծանրակշիռ պատճառներ կան կասկածելու անհատին ահաբեկչության հետ կապեր ունենալու մեջ[4]: ՄԱՓԳՀ-ն չի սատարում ահաբեկչության հետ կապված նոր թափ առնող մտավախությունների պատճառով մի շարք Պետությունների կողմից իրականացվող և/կամ քննարկվող քաղաքականությանը, որը մեխանիկորեն կալանք է կիրառում անկանոն կերպով երկիր մուտք գործող կամ կոնկրետ երկրներից ժամանող բոլոր ապաստան հայցողների նկատմամբ: Ըստ ՄԱՓԳՀ-ի՝ նման

[3] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNHCR, *Guidelines on Temporary Protection or Stay Arrangements*, February 2014 / ՄԱՓԳՀ, *Ժամանակավոր պաշտպանության կամ կացության վերաբերյալ ուղեցույց*, 2014 թ. փետրվար/, որը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.refworld.org/docid/52fba2404.html :

[4] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNHCR, *Guidelines on the Applicable Criteria and Standards relating to the Detention of Asylum-Seekers and Alternatives to Detention*, 2012 /ՄԱՓԳՀ, *Ապաստան հայցողների նկատմամբ կալանքի և կալանքի այլընտրանքային միջոցների կիրառությանն առնչվող կիրառելի չափանիշների և չափորոշիչների վերաբերյալ ուղեցույց*/, որը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.refworld.org/docid/503489533b8.html

քաղաքականությունը հակասում է կալանքի վերաբերյալ Պետությունների կողմից ընդունված՝ վաղուց հաստատված չափանիշներին և կարող է դիտարկվել որպես կամայական, նույնիսկ խտրականության վրա հիմնված արձագանք, որն այս դեպքում կարող է հակասության մեջ մտնել միջազգային իրավական նորմերի հետ:

Ե. Ապաստանի հայցողների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը

17. ՄԱՓԳՀ-ն ընդունում է, որ Պետությունների միջև տեղեկատվության փոխանակումը խիստ կարևոր է, եթե դա արվում է տվյալների պաշտպանության ընդունված սկզբունքներին և չափանիշներին համապատասխան, ինչպես նաև փախստականներին և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերով սահմանված թույլատրելիի սահմաններում[5]: Այսպիսով՝ Պետությունները պետք է հաշվի առնեն, ի թիվս այլ բաների, այն ամուր հաստատված սկզբունքը, համաձայն որի՝ ապաստան հայցողների վերաբերյալ տեղեկատվությունը չպետք է տրամադրվի ծագման երկրին: Դա կարող է վտանգի տակ դնել ապաստան հայցողի և/կամ ծագման երկրում գտնվող նրա ընտանիքի անդամների անվտանգությունը: Պետությունների լավագույն փորձի մաս է կազմում, անշուշտ, խիստ գաղտնիության քաղաքականությունը: Անգամ եթե անհրաժեշտ համարվի բացառության կարգով կապվել ծագման երկրի իշխանությունների հետ, երբ կասկածներ կան, որ ապաստան հայցողը զբաղվում է ահաբեկչական գործունեությամբ, և պահանջվող տեղեկատվությունը հնարավոր է ձեռք բերել միայն ծագման երկրի իշխանություններից, չի կարելի մատնել այն փաստը, որ անհատը ապաստանի հայց է ներկայացրել:

Զ. Փախստականի կարգավիճակի բացառումը

18. Փախստականների վերաբերյալ միջազգային գործիքների համաձայն՝ փախստականի կարգավիճակի շնորհումն անձանց, ովքեր պատասխանատվություն են կրում լուրջ հանցագործությունների համար, օրենքով բացառվում է: ՄԱՓԳՀ-ն կոչ է անում Պետություններին բացառման դրույթները կիրառել անվերապահորեն, բայց տեղին՝ ըստ պահանջի[6]: Այն նաև կոչ է անում այն Պետություններին, ովքեր դեռ

---

[5] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNHCR, *Policy on the Protection of Personal Data of Persons of Concern to UNHCR*, May 2015 /ՄԱՓԳՀ, *ՄԱՓԳՀ խնդրո առարկան հանդիսացող անձանց անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ քաղաքականություն*, 2015թ. մայիս/, որը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.refworld.org/docid/55643c1d4.html :

[6] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNHCR, Guidelines on the Application of the Exclusion Clauses: Article 1F of the 1951 Convention relating to the Status of Refugees, 4 September, 2003 /ՄԱՓԳՀ, *Բացառման դրույթների կիրառության վերաբերյալ ուղեցույց. Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թվականի Կոնվենցիայի հոդված 1(Զ)/*, որը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.refworld.org/docid/3f5857684.html և դրան ուղեկցող *Background Note / Ընդհանուր ծանոթագրությունը*, որը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.refworld.org/docid/3f5857d24.html :

այդպես չեն վարվել, ներառել 1951 թվականի Կոնվենցիայի բացառման դրույթներն ազգային օրենսդրության մեջ: Սա համապատասխանում է ոչ միայն փախստականներին առնչվող իրավական նորմերի պահանջներին, այլև Անվտանգության խորհրդի բանաձևերին, որոնք կոչ են անում Պետություններին ապաստան չտալ ահաբեկիչներին: Մասնավորապես՝ Անվտանգության խորհրդի 2001 թվականի թիվ 1373 և 2005 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 1624 բանաձևերը կոչ են անում համապատասխան միջոցներ ձեռնարկել ապաստան հայցողների նկատմամբ: Ինչպես նշվում է այս, ինչպես նաև Անվտանգության խորհրդի և Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բազմաթիվ այլ բանաձևերում, նման միջոցները, այնուամենայնիվ, պետք է համապատասխանեն միջազգային իրավունքին, այդ թվում՝ մարդու իրավունքներին և փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերին, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքին:

19. Փախստականների վերաբերյալ 1951 թվականի կոնվենցիայի հոդված 1(Զ)-ում նշված հանցագործությունները, որոնք են՝ խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, սահմանված են միջազգային գործիքներով և պետք է մեկնաբանվեն միջազգային քրեական իրավունքի մի շարք աստիճանաբար փոփոխվող աղբյուրների լույսի ներքո: Այն հանցագործությունները, որոնք խաղաղ ժամանակ կարող են իրավամբ որակվել որպես ահաբեկչական գործողություններ, ընդհանուր առմամբ համապատասխանում են պատերազմական հանցագործությունների սահմանմանը, եթե իրականացվել են զինված հակամարտության համատեքստում: Որոշակի հանգամանքներում նման գործողությունները կարող են նաև համարվել մարդկության դեմ ուղղված հանցագործություններ:

20. Հոդված 1Զ(գ)-ն վերաբերում է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին հակասող գործողություններին: Այս դրույթի շրջանակներում նշված գործողություններից շատերը կարող են իրականացվել միայն Պետությունների կամ չճանաչված/քվազի-Պետությունների անունից հանդես եկող անձանց կողմից, քանի որ Միավորված ազգերի կազմակերպության նպատակները և սկզբունքները նախատեսված են որպես ուղեցույց ծառայելու Պետությունների համար միմյանց հետ հարաբերություններում: Այնուամենայնիվ, այն գործողությունները, որոնք իրավամբ համարվում են ահաբեկչական բնույթի, և որոնք, հաշվի առնելով դրանց լրջությունը և բնույթը, կարող են անդրադառնալ միջազգային խաղաղության և անվտանգության, ինչպես նաև Պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների վրա, նույնպես կարող են տեղավորվել այս բացառման դրույթի շրջանակներում: ՄԱՓԳՀ-ն ընդունում է, որ բացառման դրույթը կարող է Հոդված

1Զ(գ)-ի հիման վրա տարածվել տվյալ Պետությունում իշխանական դիրք չզբաղեցնող անհատների վրա, եթե ապացուցվել է, որ նրանք անհատական պատասխանատվություն են կրում խնդրո առարկա գործողությունների համար:

21. Չնայած վերոգրյալին՝ որպես կենտրոնական դրույթ շարունակում է հանդես գալ Հոդված 1Զ(բ)-ն: Այս բացառման դրույթը վերաբերում է «ոչ քաղաքական լուրջ հանցագործություններին» (ապաստանի երկրից դուրս նախքան ընդունելությունը կատարված), բայց այն հիմնականում ներառում է ահաբեկչությանն առնչվող համապատասխան միջազգային կոնվենցիաներով և արձանագրություններով արգելված գործողությունները՝ անկախ նման գործողությունների հետևում թաքնված քաղաքական շարժառիթներից: Համաձայն հանձնման համատեքստում մշակված մոտեցումների, որոնք կարևոր են նաև բացառման համատեքստում, ահաբեկչական բռնարարքներն ամենայն հավանականությամբ չեն կարող դիմանալ հանցանքի քաղաքական բնույթը որոշելու նպատակով շատ արդարադատական համակարգերում կիրառվող գերակայության և համաչափության սկզբունքների քննությանը:

22. Հաշվի առնելով սխալ որոշման հետևանքների և դրա հետ կապված խնդիրների լրջությունը՝ ցանկացած բացառման դրույթի կիրառություն պետք է շարունակի անհատապես գնահատվել առկա ապացույցների հիման վրա, ինչպես նաև պետք է համապատասխանի արդարության և արդարադատության հիմնական սկզբունքներին: Ինչպես ավելի վաղ նշվել է, այս գնահատումը պետք է իրականացվի փախստականի կարգավիճակի որոշման գործընթացի շրջանակներում, չնայած որ այն տեղի է ունենում բացառման համար հատուկ նախատեսված ընթացակարգերի միջոցով:

23. Ըստ ՄԱՓԳՀ-ի՝ գնահատումն իրականացնելիս հարկավոր է հաշվի առնել նաև որոշ լրացուցիչ հանգամանքներ: Առաջին՝ բացառման հիմնավորված լինելը որոշելու հարցում բավարար չէ հիմնվել որոշակի հանցագործության, անձի կամ խմբի՝ որպես «ահաբեկչական» կամ «ահաբեկիչ» պիտակավորման վրա: Այս պիտակի վրա կենտրոնանալու փոխարեն՝ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք խնդրո առարկա գործողությունները Հոդված 1Զ-ի իմաստով հանցագործություն հանդիսանում են, թե ոչ: Երկրորդ՝ բացառումը պահանջում է որոշում այն մասին, որ խնդրո առարկա անձը անհատական պատասխանատվություն է կրում խնդրո առարկա գործողությունների համար, լինի դա որպես անմիջական կատարող, թե իր մասնակցությամբ այլ անձի կողմից այս գործողությունների իրականացմանն օժանդակող: Երրորդ՝ նույնիսկ չնայած բացառման վերաբերյալ վարույթը հավասարազոր չէ լիարժեք քրեական դատավարությանը, ապացուցման չափանիշը կամ շեմը («լուրջ հիմքեր համարելու,

որ…») պետք է ողջամիտ կասկածից վեր լինի և, ՄԱՓԳՀ-ի կարծիքով, նաև հավանականության աստիճանից բարձր:

24. Եթե բավարար ապացույցներ կան այն մասին, որ ապաստան հայցողը լուրջ, այդ թվում՝ ահաբեկչական բնույթի համարվող հանցագործությունների իրականացմամբ զբաղվող ծայրահեղական խմբի անդամ է, տվյալ խմբի վերաբերյալ առկա տեղեկատվությունը կարող է օգնել հանգել եզրակացության, որ ցանկացած ոք, ով իր կամքով դառնում կամ շարունակում է մնալ այդ խմբի անդամ, կարող է համարվել խնդրո առարկա հանցագործությունների համար անհատական պատասխանատվություն կրող անձ: Ապաստանի տրամադրման վարույթի շրջանակներում դա կարող է հանգեցնել նման գործերում անհատական պատասխանատվություն կրելու մասին հերքելի ենթադրության, որի արդյունքում ապացուցման բեռը դրվում է ապաստան հայցողի վրա: Խնդրո առարկա կազմակերպությունում անհատի զբաղեցրած դիրքը, այդ թվում՝ նրա անդամակցության կամավոր բնույթը, ինչպես նաև որոշ խմբերի մասնատումը պետք է, այնուամենայնիվ, քննության առարկա դարձվի և հաշվի առնվի բացառման վերաբերյալ որոշում կայացնելիս:

25. ՄԱՓԳՀ-ն միանգամայն կարևորում է ահաբեկչական խմբերի ֆինանսավորման և վերջիններիս ցուցաբերվող աջակցության այլ ձևերի խնդրով զբաղվելու անհրաժեշտությունը՝ համաձայն Անվտանգության խորհրդի 2001 թվականի թիվ 1373 բանաձևի և դրան հաջորդող բանաձևերի, ինչպես նաև «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 1999 թվականի միջազգային կոնվենցիայի: Նման խմբերին ֆինանսավորելը սկզբունքորեն հավասարազոր է բացառման դրույթի կիրառություն պահանջող հանցագործության կատարման կամ հանգեցնում է այլ հանցագործությունների համար անհատական պատասխանատվության: Սրանով հանդերձ՝ անհրաժեշտ է քննության առնել յուրաքանչյուր դեպքի մանրամասները, քանի որ ոչ բոլոր նմանատիպ արարքներն են հասնում լրջության այնպիսի աստիճանի, որ դրանց վրա տարածվի Հոդված 1Զ-ն: Կախված կոնկրետ հանգամանքներից, ինչպես օրինակ՝ այն դեպքերում, երբ ֆինանսավորման գումարները մեծ չեն և տրամադրվում են հատուկենտ առիթներով, հանցանքը կարող է չհասնել լրջության անհրաժեշտ մակարդակին:

26. Բացառման դրույթի կիրառման դեպքում անհատը չի կարող օգտվել 1951 թվականի Կոնվենցիայով նախատեսված՝ փախստականների միջազգային պաշտպանությունից: Այն անհատը, ում նկատմամբ կիրառվել են բացառման դրույթները, կարող է, այնուամենայնիվ, այլ միջազգային գործիքներով պաշտպանվել դեպի այն երկիր վերադարձից, որտեղ վտանգ կա, որ նա կարող է ենթարկվել վատ վերաբերմունքի: Այն

դեպքերում, երբ խնդրո առարկա Պետությունը բացառման պատճառ հանդիսացած արարքների նկատմամբ արդարադատություն իրականացնելու հնարավորություն ունի, ՄԱՓԳՀ-ն խորհուրդ է տալիս քրեական վարույթ հարուցել:

Է. Փախստականի կարգավիճակի դադարեցումը կամ անվավեր ճանաչումը

27. Կրոնական, էթնիկական կամ ազգային ծագման կամ քաղաքական հայացքների վրա հիմնված ընդհանուր կասկածները չեն կարող հիմք հանդիսանալ ո՛չ ընդհանուր վերանայման գործընթաց սկսելու, ո՛չ էլ փախստականի կարգավիճակ շնորհելու մասին վերջնական որոշման վերանայման համար: Փախստականի կարգավիճակի դադարեցումը, այն է՝ այնպիսի որոշման ընդունումը, որը չեղյալ է հայտարարում որպես փախստական ճանաչելու մասին նախնական որոշումը, սովորաբար տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ առկա են ապացույցներ այն մասին, որ փախստականի կարգավիճակի շնորհման համար կարևոր նշանակություն ունեցող փաստերը կեղծվել կամ սխալ են ներկայացվել: Սա նշանակում է, որ փախստականի կարգավիճակը կարող է դադարեցվել, եթե պարզվի, որ «ներառման» չափանիշները ժամանակին չեն բավարարվել, քանի որ, օրինակ, անհատը փախել է ոչ թե հալածանքներից, այլ օրինական հետապնդումից, կամ այն դեպքում, երբ կիրառվելու էր բացառման դրույթներից որևէ մեկը, եթե բոլոր նշանակություն ունեցող փաստերը հայտնի լինեին: Փախստականի կարգավիճակի անվավեր ճանաչումը տեղին կլինի, եթե հաստատվի, որ համապատասխան երաշխիքներ տրամադրող վարույթի շրջանակներում լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ անձը փախստական ճանաչվելուց հետո կատարել է 1951 թվականի Կոնվենցիայի 1-ին հոդվածի Զ կետի ա և գ ենթակետերով նախատեսված արարքներ[7]:

Ը. Արտաքսումը, այդ թվում՝ ծագման երկիր

28. ՄԱՓԳՀ-ին մտահոգում է այն, որ Պետությունները կարող են հակված լինել արտաքսել մարդկանց խմբերի կամ անհատների վերջիններիս կրոնական, էթնիկական կամ ազգային ծագման կամ քաղաքական հայացքների պատճառով միայն այն ենթադրության հիման վրա, որ նրանք կարող են ներգրավված լինել ահաբեկչության մեջ: Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերը, մասնավորապես՝ 1951 թվականի Կոնվենցիայի հոդված 33(2)-ը, չեն արգելում որպես փախստական ճանաչված անձանց արտաքսումը, եթե տվյալ դեպքում հաստատվել է, որ անձը վտանգ է ներկայացնում ապաստանի երկրի անվտանգության կամ համայնքի համար: Քանի որ նշված վտանգը պետք է ավելի մեծ լինի, քան վերադարձի դեպքում

[7] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNHCR, Note on the Cancellation of Refugee Status, 22 November 2004 /ՄԱՓԳՀ, *Փախստականի կարգավիճակի դադարեցման մասին ծանոթագրություն*, 22 նոյեմբերի 2004/, որը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.refworld.org/docid/41a5dfd94.html :

անձին սպառնացող վտանգները, ՄԱՓԳՀ-ն նկատում է, որ արտաքսման վերաբերյալ նմանատիպ որոշումները պետք է կայացվեն պատշաճ իրավական ընթացակարգի միջոցով, որը կհիմնավորի, որ անվտանգությունը սպառնալիքի տակ է, և հնարավորություն կընձեռի անհատին ապացույցներ ներկայացնել՝ ի հերքումն մեղադրանքների:

29. Արտաքսումը և բացառումը երկու տարբեր գործընթացներ են: Բացառումը մերժում է փախստականի կարգավիճակի շնորհումն այն անձանց, ովքեր դրան արժանի չեն համարվում այն պատճառով, որ որոշակի լուրջ հանցագործություններ կամ զազրելի արարքներ են կատարել, միևնույն ժամանակ թույլ չի տալիս արդարադատությունից փախչողներին խուսափել այդպիսի հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկվելուց: Բացառումը պաշտպանում է ապաստանի ինստիտուտի մաքրությունը: Արտաքսումը նպատակ է հետապնդում պաշտպանել ապաստանի երկիրը և հենվում է ներկա կամ ապագա սպառնալիքի գնահատման վրա: Փախստականներին իրենց ծագման երկիր վերադարձնելու շեմը՝ որպես չվերադարձելիության սկզբունքի բացառություն, պետք է առանձնապես բարձր լինի:

Թ. Հանձնումը

30. Փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերը չեն արգելում փախստական ճանաչված անձանց կամ ապաստան հայցողների հանձնումը: Այնուամենայնիվ հանձնումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե հայցվող անձին հայցող Պետությանը հանձնելը չի խախտում *չվերադարձելիության* սկզբունքը: Մասնավորապես՝ 1951 թվականի Կոնվենցիայի հոդված 33(1)-ը պարտադիր արգելք է դնում փախստականին իր ծագման երկրին հանձնելու վրա, բացառությամբ հոդված 33(2)-ով հստակ նախատեսված դեպքերի: Փախստականը, այնուամենայնիվ, կարող է հանձնվել իր ծագման երկրից տարբեր երկրի, եթե դրանով նա չի ենթարկվում հետապնդումների վտանգի, որոնք նրա նկատմամբ կարող են իրականացվել հանձնման խնդրանք ներկայացրած երկրում կամ երրորդ երկրում:

31. Ապաստան հայցողները, ում վերաբերյալ հանձնման խնդրանք է ստացվել ծագման երկրից, օգտվում են հարկադիր վերադարձից պաշտպանվածությունից՝ նախատեսված 1951 թվականի Կոնվենցիայի հոդված 33(1)-ով, քանի դեռ նրանց հայցը գտնվում է ընթացքի մեջ, ներառյալ՝ բողոքարկման փուլը: Նման դեպքերում անհրաժեշտ է բոլոր նշանակություն ունեցող հանգամանքների լույսի ներքո հաշվի առնել հանձնմանն առնչվող ցանկացած տեղեկատվություն: Ապաստանի տրամադրման և հանձնման վարույթները կարող են իրականացվել զուգահեռաբար: Սակայն, համաձայն ընդունող պետության՝ փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերով սահմանված պարտավորությունների, ապաստանի հայցը

պետք է վճռվի միջազգային պաշտպանությունից օգտվելու ենթակա լինել/չլինելը գնահատելու իրավասություն ունեցող մասնագիտացված մարմնի կողմից, և ապաստանի տրամադրման վերաբերյալ որոշումը պետք է նախորդի հանձման վերաբերյալ որոշմանը:

32. Եթե ապաստան հայցողի հանձման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել ծագման երկրից տարբեր երկրի կողմից, ապա ապաստանի տրամադրման վերաբերյալ վարույթը կարող է կասեցվել, և հայցվող անձը կարող է հանձնվել, եթե հաստատվի, որ դրա արդյունքում վերջինս չի ենթարկվի հետապնդումների վտանգի, և միջոցներ ձեռնարկվեն, որոնք կերաշխավորեն, որ նա քրեական վարույթի ավարտից հետո կկարողանա օգտվել, 1951 թվականի Կոնվենցիայով սահմանված չափանիշներին համապատասխան, իր ապաստանի հայցի վճռման իրավունքից: Այն դեպքերում, երբ հանձնումն անհնար է հետապնդման կամ հայցվող անձի նկատմամբ լուրջ վնասի այլ ձևերի գործադրման վտանգի առկայության պատճառով, ճիշտ ելքը, ՄԱՓԳՀ կարծիքով, քրեական հետապնդման իրականացումն է ապաստանի երկրում՝ *aut dedere aut judicare* («հանձնել կամ քրեական հետապնդում իրականացնել») սկզբունքին համապատասխան[8]:

Ժ. Քրեական ոլորտում օրենքի կիրառության ընդլայնումը

33. ՄԱՓԳՀ-ն ողջունում է միջազգային ահաբեկչության վերաբերյալ համապարփակ կոնվենցիայի, ինչպես նաև այլ միջազգային կամ տարածաշրջանային գործիքների ընդունումը, ինչը նաև կծառայի որպես համաձայնեցված շրջանակ ազգային օրենսդրության համար: ՄԱՓԳՀ-ն արդեն ներկայացրել է իր մեկնաբանությունները կոնվենցիայի նախագծի և մի քանի ազգային օրենսդրությունների վերաբերյալ: Օրենսդրական բացերի վերացումը և ահաբեկչական հանցագործությունների հստակ սահմանումը կարևոր են ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության համար:

34. ՄԱՓԳՀ-ն, այնուամենայնիվ, կոչ է անում կառավարություններին այնպես անել, որ միջազգային գործիքները և ազգային օրենսդրությունները չպարունակեն այնպիսի դրույթներ, որոնք կարող են ապաստան հայցողներին/փախստականներին անհիմն կերպով նույնացնել ահաբեկիչների հետ: Բացի այդ, սահմանումները պետք է բավականին հստակ լինեն: Սահմանումները չափազանց ընդհանուր ու աղոտ լինելու դեպքում վտանգ կա, որ «ահաբեկիչ» պիտակը ոմանց կողմից կարող է չարաշահվել քաղաքական նպատակներով, օրինակ՝ քաղաքական հակառակորդների

[8] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNHCR, *Guidance Note on Extradition and International Refugee Protection*, April 2008 /ՄԱՓԳՀ, *Հանձնման և փախստականների միջազգային պաշտպանության վերաբերյալ ուղղորդող ծանոթագրություններ*, 2008 թվականի ապրիլ/, որը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.refworld.org/docid/481ec7d92.html :

գործողությունները քրեականացնելու նպատակով: Սա ՄԱՓԳՀ-ին մտահոգող խնդիր է: Այն կարող է շատ հեշտ հանգեցնել հետապնդման հասնող մեղադրանքների:

Ի. Վերաբնակեցման և անվտանգության ապահովմանն ուղղված այլ կանոնավոր միջոցառումների շարունակվող կարևորությունը

35. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնի տեղահանված անձանց թիվն ամբողջ աշխարհում հասել է 60 միլիոնի, և որ նրանցից շատերը փախել են ձգձգվող հակամարտություններից և բռնություններից՝ ընդգծվում է վերաբնակության հարցում ցուցաբերվող շարունակական աջակցության կարևորությունը: ՄԱՓԳՀ-ն շարունակում է աշխարհով մեկ վերաբնակեցման համար տարբեր երկրներ փնտրել, ինչպես նաև ուժեղացնել իր ծրագրերը՝ սկսած դիմումների հրատապ քննարկումից, վերջացրած վերաբնակեցման առավել համակարգված կերպով իրականացմամբ, որի նպատակն է փախստականների կարիքներին համապատասխան տևական լուծումներ առաջարկել: ՄԱՓԳՀ-ն նաև համագործակցում է Պետությունների հետ փախստականների ընդունման համար այլ ապահով ուղիներ առաջարկելու ուղղությամբ, այդ թվում՝ մարդասիրական ընդունելությունը, մարդասիրական վիզաները, մասնավոր հովանավորչությունը, ընտանիքի վերամիավորումը, կրթաթոշակները, բժշկական էվակուացիան և աշխատուժի շարժունակության նախաձեռնությունները, որոնք լրացնում են գոյություն ունեցող վերաբնակեցման ծրագրերին և հնարավորություն ընձեռում միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց հասնել անվտանգ վիճակի:

36. Վերջին տարիներին մի քանի երկրներ մեծացրել են իրենց պարտավորությունների շրջանակը վերաբնակեցման կամ մարդասիրական ընդունելության այլ ձևեր առաջարկելու հարցում, սակայն կան նաև նշաններ, որոնք խոսում են այն մասին, որ նման ծրագրերին ցուցաբերվող աջակցությունը կարող է նվազել, հատկապես՝ որոշ խմբերի համար: Սա կարող է հանգեցնել հակառակ արդյունքի: Ամեն դեպքում ՄԱՓԳՀ-ն սատարում է անվտանգության նպատակով իրականացվող ստուգումների ուժեղացմանը (այդ թվում՝ վերաբնակեցման և ընդունելության այլ ձևերի հավակնող թեկնածուներից մատնահետքեր վերցնելուն) այս գործընթացների օբյեկտիվությունն ապահովելու նպատակով:

37. ՄԱՓԳՀ-ն ողջունել է «Տեղահանման և վերաբնակեցման եվրոպական սխեմաների» ընդունումը Եվրոպայում: Այս սխեմաները ներառում են անվտանգության միջոցառումներ և ստուգումներ, այդ թվում՝ պատշաճ գրանցում: ՄԱՓԳՀ գլոբալ վերաբնակեցման ծրագրի, ընտանիքի վերամիավորման, մասնավոր հովանավորչության, մարդասիրական և ուսանողական վիզաների սխեմաների հետ

միասին դրանք կանոնավոր միջոցառումներ են առաջարկում՝ որպես անկանոն տեղաշարժերի այլընտրանք:

Լ. Ռասայական խտրականության և օտարատյացության դեմ պայքարը

38. Ապաստանը ահաբեկիչների համար ապահով պատսպարանի հետ նույնացնելը ոչ միայն իրավաբանորեն սխալ է, այլև ծառայում է հանրության առաջ փախստականներին վատաբանելուն և նպաստում է անձանց տարբերակմանը՝ ըստ ռասայական, ազգային և կրոնական պատկանելության, ինչը հանգեցնում է խտրականության և ատելության վրա հիմնված հալածանքների:

39. Եվրոպայում և այլուր տեղի ունեցած՝ անվտանգությանը սպառնող վերջին իրադարձությունները պատճառ են դարձել անհիմն և որոշ դեպքերում հակադեմ կարծիքներ արտահայտող քննադատական ճառերի: 1951 թվականի Կոնվենցիայի և ներգաղթյալներին վերաբերող այլ քաղաքականությունների լիարժեք կիրառությունն առավել լայն իմաստով իրենից ներկայացնում է տվյալ ոլորտում առկա ներկա մարտահրավերների դիմագրավմանն ուղղված ավելի լայն արձագանքի հիմնական բաղադրիչ: Բեյրութում և Փարիզում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո՝ 2015 թվականի նոյեմբերի 20-ին, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ մենք պետք է զգուշանանք «անտեղի կասկածներից» փախստականների և գաղթականների վերաբերյալ, ովքեր կարող են օգնել կատաղի ծայրահեղականության դեմ պայքարում, հավելելով, որ իրականության նման աղճատումներից և խտրականությունից «շահում են միայն ահաբեկիչները, ում նպատակը պառակտում և վախ սերմանելն է»:

40. Հատկապես այս դժվարին պահին անհրաժեշտ է շարունակական և վճռական առաջնորդություն՝ փախստականների պաշտպանության մարդասիրական մարտահրավերների շուրջ ստեղծված արհեստական լարվածության թուլացման և դրանց ապաքաղաքականացման, ինչպես նաև փախստականների և ապաստան հայցելու իրավունքի մասին ավելի ճիշտ պատկերացումների ձևավորման համար:

ՄԱՓԳՀ
Ժնև, 17 դեկտեմբերի 2015